«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ <<Միջավայրի դերը կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթության գործում>>

ԱՌԱՐԿԱ Մայրենի

ՀԵՂԻՆԱԿ Քրիստինե Եզիկյան

ՄԱՐԶ Շիրակ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ <<Գյումրու թիվ 20 հիմնական դպրոց >> ՊՈԱԿ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Մարդկային զարգացման գործընթացն ու արդյունքները բնութագրվում են երեք հիմնական գործոնների ազդեցությամբ՝ ժառանգականությամբ, միջավայրով և դաստիարակությամբ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 4

ԳԼՈՒԽ 1. ՍՈՑԻԱԼ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1. 1. Գեղարվեստական կրթության էությունն ու բովանդակությունը տարրական դպրոցում…… 6

1. 2. Սոցիալ – մշակութային միջավայրի դերը երեխայի անձի զարգացման գործում …… 28

1.3. Միջավայրի ազդեցությունը կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության գործում ՏՀՏ - ների կիրառմամբ…… 32

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 35

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… 37

ՀԱՎԵԼՎԱԾ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Այսօրվա մեր հասարակական կյանքի զարգացման փոփոխությունները աննախընթաց են, օրեցօր, ժամ առ ժամ: Գիտության և տեխնիկայի ընձեռած նոր հնարավորություններն արագորեն ներթափանցում են հասարակական հարաբերությունների, կյանքի կազմակերպման, աշխատանքի, գիտելիքների ձևավորման ու ամրապնդման ոլորտներ:

Ուրեմն, մարդու բացառիկության դրսևորման ու զարգացման հիմնական միջոցը ժամանակին համընթաց քայլելն, համապատասխան կրթություն և դաստիարակություն ստանալն է:

Միջավայրը լինելով կրթության և դաստիարակության կարևոր գործոններից մեկը, իր ազդեցությունն է ունենում կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության գործում և համարվում է երեխայի գեղարվեստական կրթության կազմակերպման հիմնական միջոց: Օգնում է երեխային ձևավորվել որպես անձ, հետագայում նաև որպես անհատականություն, դաստիարակում է ճաշակը, գեղագիտական զգացողության բարձր մակարդակը, գեղեցիկն ընկալելու, ճանաչելու, հասկանալու ունակությունները, իդեալը: Ուստի կարևոր է ուսումնասիրել միջավայրի դերը՝ որպես կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության հիմնական միջոց:

Աշխատանքի նպատակն է՝

Ուսումնասիրել միջավայրի դերը կրտսեր դպրոցականի զարգացման գործում և վերլուծել դրա ազդեցությունը գեղարվեստական կրթության իրականացման տեսանկյունից:

Աշխատանքի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել միջավայրի դերը կրտսեր դպրոցականների զարգացման գործում:
2. Վերլուծել կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթության հիմնական ուղղությունները:
3. Ներկայացնել միջավայրի ազդեցությունը կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթության գործում:
4. Մեկնաբանել ՏՀՏ - ների դերը կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթության գործում:
5. Կատարել սոցիոլագիական հարցում և արդյունքների վերլուծություն:

Աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը.

Աշխատանքի գիտատեսական ու գիտագործնական նշանակությունը պայմանավորված է կրտսեր դպրոցականի վրա սոցիալական միջավայրի ազդեցության ուսումնասիրություններով, որտեղ առավել խոր անդրադարձ է կատարվել և ներկայացվել միջավայրի ազդեցությունները գեղարվեստական կրթության գործում:

Աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է տեսական նյութի խորը ուսումնասիրությամբ, որոնք կարող են օգտագործվել կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության հարցերն ուսումնասիրելիս: Իսկ այս ամենի իրականացումը դպրոցում՝ ուսումնական պրոցեսի ժամանակ, հանդիսանում է նյութի գործնական նշանակությունը: Հետազոտությունն ամբողջությամբ կարող է օգտակար լինել դասվարի, ծնողների, ինչպես նաև կրտսեր դպրոցականի ուսումնադաստիարակչական խնդիրներով զբաղվող մասնագետների համար:

Աշխատանքի իրականացման համար կիրառվել են հետազոտության հետևյալ **մեթոդները՝** թեմային առնչվող մասնագիտական գիտական գրականության ուսումնասիրություն, զրույց, դիտումներ, հարցազրույց, սոցիոլոգիական հարցումներ, վերլուծություն, համեմատում, համադրում:

Աշխատանքի կառուցվածքը՝

Աշխատանքը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից, ենթագլուխներից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքը կազմում է համակարգչային շարվածքով 60 էջ:

ԳԼՈՒԽ 1

ՍՈՑԻԱԼ - ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵԽԱՅԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1 ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Կրթությունը և դաստիարակությունը, որոնք նպաստում են անձի համակողմանի ու ներդաշնակ զարգացմանը, ցանկացած քաղաքակիրթ հասարակության ձևավորման հիմքն են: Աճող սերնդի դաստիարակությունն իրականացվում է քաղաքական ու տնտեսական բարեփոխումների պայմաններում, որտեղ իր առանցքային դերն ունի սոցիալ – մշակութային միջավայրը:

Քաղաքական և սոցիալ – տնտեսական տեղաշարժի արդի ժամանակաշրջանում հասարակության մեջ, որին հատուկ են արժեհամակարգի, հասարակական նորմերի շարունակական վերափոխումները, ըստ էության բավականաչափ չի կարևորում մարդու հոգևոր ներաշխարհի զարգացման առաջնահերթությունը: Հայ հասարակությունը ևս գտնվում է օտար մշակույթների ազդեցության ոլորտում՝ ընդունելով օտարածին նորամուծություններ ու բարքեր: Այսօր հրատապ է գեղարվեստական կրթության հիմնախնդիրը ազգային մշակույթի, արժեքների պահպանման և գալիք սերունդներին փոխանցման համատեքստում, և այս խնդրի լուծման պատասխանատվությունը դրվում է սոցիալ – մշակութային միջավայրի առավել կարևոր բաղադրիչների՝ ընտանիքի, դպրոցի, հասարակության վրա: Այս կառույցները գեղարվեստական կրթության միջոցով պետք է կարողանան դաստիարակել այնպիսի սերունդ, որը կլինի հազարամյա հայ մշակույթի և համամարդկային արժեքների կրողը՝ չկորցնելով ազգային ինքնությունն ու ինքնատիպությունը:

Գաղտնիք չէ, որ ազգը պահողն ու շարունակողը, ազգային նկարագիրն ու դիմագիծը սերնդեսերունդ փոխանցողը ընտանիքն է: Հայ ժողովրդի համար ընտանիքը սրբություն է, ավանդույթների, սովորույթների, մշակույթի, դաստիարակության և բազմաթիվ այլ հատկանիշների կրողն ու փոխանցողը: Այն երեխայի կյանքում հասարակական առաջին աստիճանն է և մեծ տեղ ու դեր է զբաղեցնում նրա դաստիարակման, կայացման հարցում: Այստեղ են դրվում երեխայի անձնավորության հիմքերը, և կառուցվում է նրա սոցիալական կերպարը[1]:

Ընտանիքում է մարդն ստանում իր նախնական հոգևոր և բարոյական դաստիարակությունը: Ուստի խիստ կարևոր է բարոյահոգեբանական այն մթնոլորտը, որտեղ մեծանում է անհատը, որի հիման վրա էլ ձևավորվում է վերջինիս բարոյական և անձնային որակները:

Ընտանեկան դաստիարակության գերագույն նպատակը մարդ կերտելու գործընթացն է ոչ սոսկ իբրև ֆիզիկական գոյություն, այլ որպես բարոյական հատկանիշների ու առաքինությունների խտացում:

Մարդու զարգացման համար կարևոր է յուրաքանչյուր տարիք: Դաստիարակության և զարգացման ավանդական գլխավոր ինստիտուտ է համարվում ընտանիքը: Այն, ինչը երեխան մանկական տարիներին ձեռք է բերում ընտանիքում, պահվում է ողջ կյանքում: Դաստիարակության ինստիտուտներից և ոչ մեկը չի կարող համեմատվել ընտանիքի հետ: Նրանում ներկայացվում է երեխայի անձի ձևավորման հիմքը: Ընտանիքը կարող է ներկայանալ ինչպես դրական, այնպես էլ զարգացման բացասական գործոնում: Քանի որ երեխայի դաստիարակությունը սկսվում է անմիջապես նրա լույս աշխարհ գալուց հետո, ուստի ծնողների վարքագծից, նրանց փոխհարաբերություններից, ընտանեկան միջավայրից են կախված երեխայի դաստիարակության բովանդակությունն ու դաստիարակության ձևերը:

«Ընտանիք» ինստիտուտի ուղղությամբ հետազոտությունները ցույց են տվել, որ վերջին տասնամյակների տնտեսական, քաղաքական, հասարակական ու մշակութային զարգացումները դեռևս շարունակում են էապես ազդել ընտանիքի մոդելի վրա: Այդ իսկ պատճառով՝ մեծանում է ընտանիքի ‹‹ռիսկայնության» հավանականությունը[2]:

«Ընտանիք» սոցիալական ինստիտուտում են դրվում երեխայի ֆիզիկական, բարոյական, գեղագիտական, մտավոր դաստիարակության հիմքերը, նրա մշակութային զարգացումը, որոնց իրականացման հարցում մեծ է ծնողների դերն իրենց անձնային, բարոյական որակներով ու վարքագծով, կարևորվում են նրանց արժեքային կողմնորոշումները, որոնք երեխայի համար ընդօրինակման առաջին նմուշներն են: Յուրացնելով ընտանեկան մշակութային միջավայրի արժեքները՝ երեխան դառնում է հենց այդ արժեքների կրողն ու ժառանգորդը, որոնց հիման վրա էլ ձևավորվում է նրա աշխարհայացքը: Յուրաքանչյուր արժեք կարող է բնութագրվել որպես

---

[1]Խոջոյան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, ‹‹Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 1.2017, էջ 56:
[2]«Ընտանիք» ինստիտուտի հետազոտություն, Երևան, 2006:

հավերժական, բացարձակ և համամարդկային միայն այն դեպքում, երբ կապված է ապագայի հետ և լի է հնարավորություններով[3]:

Ընտանիքն այն առաջնային խումբն է, որը վճռական դեր է խաղում իր կազմում զարգացող երեխաների ինքնագիտակցության ծագման ու ձևավորման գործում: Անառարկելի է, որ երեխայի դաստիրակությունն սկսվում է ընտանիքում: Ընտանիքն է սոցիալականացման առաջնային օղակը, ուր երեխայի սոցիալական էության սկիզբն է դրվում: Ընտանիքում են յուրացվում առաջին սոցիալական դերերն ու հարաբերությունները, բացահայտվում են երեխայի անհատական առանձնահատկություններն ու ձևավորվում բնավորությունը, դաստիրակվում են բարոյական հատկություններ ու սոցիալական վարքագծի հիմքեր:

Ընտանիքը բոլոր ժամանակներում եղել է հասարակության արժեքային համակարգի կրողը և ցուցանիշը: Չնայած նրան, որ պատմամշակութային յուրաքանչյուր ժամանակաշրջան իր կնիքն է դրել ընտանեկան արժեքների ձևավորման և հասարակության կողմից դրանց ընկալման վրա, միևնույն է, ընտանիքը միշտ էլ համարվել է մարդկության կենսագործունեությունը կարգավորող համամարդկային արժեք: Այնուամենայնիվ, պատմական տարբեր ժամանակաշրջաններում տարբեր մարդիկ ունեցել են ընտանեկան արժեքների վերաբերյալ տարբեր կողմնորոշումներ: Ընտանիքը՝ որպես սոցիալական ինստիտուտ, զգայուն է հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունների նկատմամբ, քանի որ այն իր մեջ արտացոլում է տվյալ հասարակության պատկերը և ունի այն բոլոր օրինաչափություններն ու հակասությունները, որոնք հատուկ են այդ հասարակությանը: Ընտանեկան դաստիրակության գլխավոր նպատակը երեխային օգնելն է՝ արդյունավետ կառուցելու իր փոխհարաբերությունները շրջապատող աշխարհի հետ և կայանալու որպես անհատականություն:

Ինչպես չկան ազգեր, որոնք չունեն սեփական պատմությունը, այնպես էլ չի կարող լինել ընտանիք՝ առանց ուրույն ավանդույթների, նորմերի և արժեքների:

Ընտանիքի մասին ժամանակակից պատկերացումներն այսօր այլ են: Այլ են պատկերացումները ընտանեկան արժեքների և ընտանիքի սոցիալական նորմերի վերաբերյալ: Ժամանակակից կյանքում հաճախ ընտանիքը դիտարկվում է սոսկ որպես երկու անհատների միություն, որտեղ նրանցից յուրաքանչյուրը կարող է բավարարել իր հիմնական պահանջմունքները: Ավանդական-հայրիշխանական ընտանիքներին աստիճանաբար փոխարինելու են գալիս էգալիտար ընտանիքները, որոնց անդամներն ունեն հավասար իրավունքներ ու պարտականություններ[4] :

Անգլիացի սոցիալիստ Ռոբերտ Օունը գտնում էր, որ ընտանիքի ազդեցությունը երեխայի զարգացման ու ձևավորման վրա ունի անփոխարինելի ուժ, որովհետև յուրաքանչյուր խելամիտ ծնող լավ է ճանաչում իր երեխային: Երեխայի ընտանեկան դաստիարակության և զարգացման համար

---

[3]Աշիկյան Ա., Ընտանիքը երեխայի անձի ձևավորման և զարգացման սոցիալ-մշակութային միջավայր, «Պատմություն և միջավայր», հայագիտական հանդես, Երևան, 2016, էջ 348:

[4]Մարկոսյան Ն. Ռ., Ժամանակակից ընտանիքների արժեհամակարգը և դրա ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2015, էջ 206:

ամուր հիմքը միմյանց սիրելն է: Ընտանիքը, որտեղ փոխհարաբերությունների հիմնական տեսակը համարվում է համագործակցությունը, ձեռք է բերում հատուկ որակ, դառնում է զարգացման բարձր մակարդակի խումբ՝ կոլեկտիվ:

Առողջ հասարակություն ստեղծելու համար յուրաքանչյուր ծնող պետք է իր երեխային դաստիարակի առողջ բանականությամբ: Ինչքան երեխան ճիշտ է դաստիարակվում, այնքան դա լավ է անդրադառնում հենց իր՝ ծնողի վրա: Ամուր ընտանիքի հիմքում ընկած է երեխայի ճիշտ զարգացման գործընթացը: Երեխան որքան զարգացած է, խելացի, առողջ մտածելակերպով, այնքան շահում է հասարակությունը: Ճիշտ է՝ծնողն է դաստիարակում երեխային, բայց քիչ չեն նաև արտաքին ազդեցությունները, այն է՝դպրոցը, ընկերները, շրջապատը:

Ընտանեկան դաստիարակությունը պետք է կառուցել հետևյալ սկզբունքներով[5].

- ✓ աճող մարդու նկատմամբ մարդասիրության ու գթասրտության,
- ✓ երեխայի հետ բաց և վստահելի հարաբերություններ հաստատելու,
- ✓ երեխային ընտանեկան կենսագործունեության մեջ ընդգրկելու,
- ✓ երեխային օգնելու պատրաստակամության,
- ✓ երեխայի անվտանգության զգացման ապահովման,
- ✓ բռնությունների, ֆիզիկական պատիժների բացառման,
- ✓ երեխայի իրավունքների պաշտպանության ապահովման /սեփականության իրավունք իր սենյակը, իր նամակը, իր անկյունն ունենալը/ և ընտանիքում առողջ մթնոլորտ ստեղծելու.
- ✓ երեխային սիրելու և նրան զգացնել տալու, որ ինքը սիրո արդյունք է և իր ծնունդը ուրախություն է պատճառել ընտանիքի բոլոր անդամներին գաղափարներով:

Միանգամայն տեղին է այն միտքը, թե ընտանիքը կարող է դաստիարակել միայն այն դեպքում, երբ ինքը դաստիարակված է: Երեխաներին ճիշտ դաստիարակելն ընտանիքի համար սոսկ պարտականություն չէ, այլ հասարակության պահանջ, քանի որ կանոնավոր դաստիարակություն չստացած մարդը փորձանք է ոչ միայն ընտանիքի, այլև հասարակության համար:

Յուրաքանչյուր դաստիրակության ոճ իր կնիքն է դնում երեխայի անհատից դեպի անձ ձևավորման գործընթացում: Չկան ճիշտ կամ սխալ դաստիրակության ոճեր: Ամեն մի դաստիրակության ոճ կարող է ունենալ և դրական, և բացասական ազդեցություներ երեխայի անձի ձևավորման վրա, հետևաբար անհրաժեշտ է զգույշ մոտենալ այս կամ այն դաստիրակության ոճի ընտրության ժամանակ:

---

[5]Միջավայրի ազդեցությունը դաստիարակության գործում- http://www.surbzoravor.am/post/view/och-liar%D5%AAeq-yntaniqi-azdecutyuny-erekhayi-andzi-dzevavorman-vra

Երեխայի դաստիարակությունն իրականացնելիս ինչպես ծնողները, այնպես էլ ընտանիքի մյուս անդամները պետք է ուշադրություն դարձնեն դաստիարակության բաղադրատրրերի սերմանմանը և իրենց օրինակով դրանց իրականացմանը:

Դաստիարակությունն իրականցնելիս կարևոր է համարվում նաև գեղարվեստական տարրերի դաստիարակումը, որոնք հետագայում ամրապնդվում և զարգանում են դպրոցական տարիքում:

Երեխայի ստեղծագործական կարողությունների, գեղարվեստական ճաշակի զարգացման գործում առաջնային դերը պատկանում է ծնողներին: Ընտանիքում են ձևավորվում գեղագիտական դաստիարակության սաղմերը, և երեխայի աշխարհընկալումն ու դիրքորոշումների ձևավորումը սկսվում է գեղեցիկի ճանաչողությամբ: Ծնողների խնդիրն է երեխային շրջապատող միջավայրում գեղեցիկ առարկաների միջոցով գեղեցիկին, ներդաշնակությանը հաղորդակցելը: Դեռևս վաղ մանկությունից երեխայի համար գեղեցիկի պատկերացում են ձևավորում խաղալիքները, կենցաղային առարկաները, ընթերցված գրքերի, հեքիաթների հերոսները, որոնց հաճախ ընդօրինակում են: Գեղարվեստական կրթությունը նպատակաուղղված և համակարգված սկսվում է բնության գեղեցկությունների ընկալումից, արվեստի ստեղծագործություններին ծանոթանալուց, զգալուց, գիտակցելուց, հուզվելուց, տպավորվելուց ու գնահատելուց: Վաղ տարիքից երեխայի մեջ պետք է զարգացնել գեղեցիկն ընկալելու, տեսնելու, լսելու ունակություն: Վ. Գ. Բելինսկին նշում է, որ աշխարհի ճանաչողությունն ընթանում է երկու ուղիով՝ գիտական իմացությամբ և արվեստի միջոցով. գիտնականը խոսում է փաստերով, գրողը՝ կերպարներով, նկարիչը՝ պատկերներով. չնայած տարբեր են ձևերը, սակայն ընդհանուր է բովանդակությունը, նպատակը, թեման:

Այն ամենը, ինչ ստանում է երեխան ընտանիքում և ավելի ուշ՝ դպրոցում, մեծ մասամբ որոշում է երեխայի ինտեգրումը սոցիալական միջավայր, ճանաչողական կարողությունների ու գեղագիտական մշակույթի հետագա զարգացումը: Ընտանիքը երեխայի զարգացման ու ձևավորման առաջնային միջավայրն է, և ծնողներն են պատասխանատու երեխայի գեղարվեստական դաստիարակության համար: Ըստ Ու. Ֆ. Սունայի՝ <<Գեղագիտական դաստիարակությունը մարդու կողմից գեղագիտական արժեքների յուրացումն ու կատարելագործումն է>>: Զարգացման յուրաքանչյուր փուլում երեխան ուսումնասիրում է իրեն շրջապատող աշխարհը, գնահատում է իրերի և երևույթների գեղեցկությունը, ներդաշնակությունը, համաչափությունը, ընկալում, գնահատում գեղագիտականը կյանքում, բնության մեջ և արվեստում: Այս գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է երեխաներին շրջապատող մարդկանց՝ ծնողների, ուսուցիչների և ընդհանրապես հասարակության աջակցությամբ և ուշադրությամբ: <<Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, փոխներգործուն մեթոդները և ճիշտ կազմակերպված մանկավարժական գործընթացը կարող են միայն խթանիչ ուժ հանդիսանալ սովորողների գեղարվեստական կրթության, արժեքային համակարգի ձևավորման, նրանց բարոյահոգեբանական կերպարի կայացման համար>>:

Հասարակության զարգացման անցումային շրջանի իրավիճակը, սրելով մարդու գոյության իմաստը և աշխարհում նրա տեղը որոնելու գործընթացները, հանգեցնում է կրթության հումանիզացման

անհրաժեշտությանը և նախապատվություն է տալիս անհատի գեղարվեստական և գեղագիտական արժեքների զարգացմանը:

Հանրակրթական դպրոցներում, ժամանակակից կրթական միջավայրի պայմաններում, զարգացման և դաստիարակության գործընթացն ապահովում է յուրաքանչյուր աշակերտի ընդգրկումը տարատեսակ գործունեության մեջ, որի իրականացմամբ որոշվում է երեխայի գեղարվեստական որակների արդյունավետությունը: Կրտսեր դպրոցական տարիքը անհատի ձևավորման և սոցիալականացման ամենակարևոր փուլն է, որը բնութագրվում է երեխայի՝շրջապատող աշխարհի գիտելիքների ծանոթությամբ, անկախ մտածողության զարգացմամբ, ճանաչողական հետաքրքրությամբ և հետաքրքրասիրությամբ[6]:

Գեղարվեստական կրթությունն դպրոցում ապահովում է կրտսեր դպրոցականի անհատականության գեղագիտական զարգացման դինամիկան, մինչդեռ մի փուլից մյուսի անցումը ոչ միայն քանակական փոփոխությունների արդյունք է, այլև աշակերտի ներքին աշխարհի էական կազմավորում:

Գեղեցիկը ճանաչելու, հասկանալու, զգալու, ինչպես նաև գեղարվեստական այլ ունակությունների նախադրյալները մարդուն տրվում են ժառանգաբար: Բայց դրանց ձևավորվումը և զարգացումը հիմնականում իրականացվում է սոցիալական ամենատարբեր օղակներում, որոնց մեջ կարևորագույնը, թերևս, հանրակրթությունն է՝ իր գեղարվեստական կրթության բաղադրիչով:

Ժամանակակից գիտատեխնիկական նվաճումները և տեխնոլոգիաների գերարագ զարգացումը, գիտության և տեխնիկայի կողմից մարդու ինքնությանը նետված մարտահրավերներն ավելի ու ավելի հրատապ են դարձնում անձի գեղարվեստական կրթության խնդիրները: Ահա թե ինչու անձի հոգևոր զարգացման և կայացման մեջ գեղարվեստական ասպեկտի նշանակալիության արժևորումը դաստիարակության ժամանակակից հիմնախնդիրներից է: Գեղարվեստական դաստիարակությունը նպաստում է անձի զգացմունքային և ինտելեկտուալ ոլորտների ձևավորմանը, հանրության մեջ վարքի և շրջակա աշխարհի հետ նրա համագործակցային հարաբերությունների մշակմանը, անձի ներդաշնակ և բնական սոցիալականացմանը[7]:

Կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության համակարգը ինտեգրված է տարրական ընդհանուր կրթության հիմնական կրթական ծրագրում՝հաշվի առնելով կրտսեր դպրոցական տարիքի երեխաների տարիքային, հոգեբանական և մանկավարժական առանձնահատկությունները: Կրթության այս ուղղությունը ենթադրում է աշխարհի նկատմամբ գեղարվեստական և ստեղծագործական վերաբերմունքի մոդելի մշակում՝ կրտսեր դպրոցականի տարիքին համապատասխան գործողությունների միջոցով:

---

[6]Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168:

[7]Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 216:

Գեղարվեստական դաստիարակությունը կրտսեր դպրոցականի ինտեգրալ կրթական գործընթացում մեծ նշանակություն ունի, քանի որ հենց այս տարիքում է, որ առաջատարներից մեկը երեխայի հուզական և զգայական զարգացումն է, որը նպաստում է նրա արտաքին աշխարհի ակտիվ զարգացմանը և շրջապատող մարդկանց հետ հաղորդակցմանը:

Համակողմանի ու ներդաշնակ զարգացած մարդ կարող է համարվել նա, ով ունի նաև գեղարվեստական դաստիարակվածություն, կրթվածություն: Գեղեցիկին հաղորդակից լինելով, մարդը հանգիստ է գտնում: Արվեստը օգնում է նրան պայքարել, հաղթել, ցանկացած գործունեության մեջ ոգևորող սկիզբ ներդնել: Գեղարվեստական կրթությունը դաստիարակողի ու դաստիարակվողի համատեղ գործունեության գործընթաց է՝ դաստիարակվողների գեղագիտական կուլտուրան ձևավորելու համար:

Գեղագիտական դաստիարակությունը չի կարող սահմանափակվել միայն գեղարվեստական կրթությամբ: Այս գործում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում գեղեցիկի արվեստը: Գեղարվեստի լավագույն նմուշները նպաստում են մարդկանց գեղեցիկ կարողությունների բացահայտմանը:

Բ. Մ. Նեմենսկին գտնում էր, որ գեղագիտական դաստիարակության էությունը ‹‹…կյանքի երևույթների նկատմամբ մարդու վերաբերմունքի մակարդակն է, այն բարձրագույն մակարդակը, երբ ընդհանուր օգուտը և ճշմարտությունը տրանսֆորմացվում են խորապես անձնական, ազատ, անշահախնդիր գեղագիտական վայելքում››[8]:

Գեղագիտական դաստիարակության Էության մեջ դրսևորվում են երեք կողմեր 1.անձի գեղագիտական ընկալումներն ու ըմբռնումները 2.գեղագիտական պատկերացումներն ու դատողությունները 3.գեղագիտական մտածողությունն ու համոզմունքները Առանց այդ որակների անձը չի կարող արժեվորել ու գնահատել արվեստի գործերը, նա չի ունենա գեղագիտական ճաշակ: Սա է պատճառը, որ մարդիկ տարբեր ձևով են ընկալում ու զգում գեղեցիկը: Գեղագիտական դաստիարակությունը օգնում է ձևավորելու նոր մարդու ամբողջական անձնավորությունը՝ իբրև իր բարոյական մտքերավ ազնիվ մարդու, որ կարողանում է տեսնել ու գնահատել գեղեցիկը կյանքում, ամենատարբեր բնույթի գործունեության մեջ, որ պայքարում է հանուն գեղեցկության: Գեղագիտական դաստիարակությունը իրականացնում է երկու հիմնական գործառույթ. այն ձևավորում է սովորողի արժեհամակարգի և արժեքային կողմնորոշման գեղագիտական բաղադրիչը և զարգացնում նրա գեղագիտական և ստեղծագործական ներուժը: Այն նաև մարդկային փոխհարաբերությունների կարգավորման միջոց է: Մարդը միշտ ձգտում է դեպի գեղեցիկը: Այս տեսակետից դաստիարակության գեղագիտական և բարոյական բաղադրիչները մոտենում են իրար: Ընդհանրապես, գեղագիտական դաստիարակությունը սերտորեն կապված է, ավելին՝ ինչ-որ իմաստով միահյուսվում է ինչպես

[8] Неменский Б.М., Мудрость красоты, М., “Просвещение”, 1981, с. 28:

բարոյական դաստիարակության, այնպես էլ ինտելեկտուալ զարգացման հետ:

Գեղեցիկի և բարու փոխհարաբերությունները և համապատասխան արժեքների ձևավորման խնդիրները եղել են բոլոր ժամանակների հետազոտողների ուշադրության կենտրոնում: Որոշ հետազոտողներ հակված են գեղագիտական դաստիարակությունը ներառել բարոյական դաստիարակության մեջ: Հայտնվում է նաև տեսակետ, ըստ որի գեղեցիկը ծառայում է որպես բարոյական դաստիարակվածության մակարդակ: Գեղագիտական դաստիարակության շնորհիվ հնարավոր է դառնում նաև անձի հոգևոր աշխարհի գեղագիտական, բարոյական և ինտելեկտուալ բաղադրիչների միջև լիակատար ներդաշնակության հաստատումը[9]:

Գեղագիտական դաստիարակությունը իրականացվում է բոլոր հասակներում: Եվ ինչքան շուտ է մարդը ենթարկվում նպատակաուղղված գեղագիտական ներգործության, այնքան մեծ է դրա արդյունավետ լինելու հավանականությունը:

Հանրության մեջ կա այն թյուր կարծիքը, թե հանրակրթական դպրոցում գեղարվեստական կրթությունը պետք է իրականացնել միայն արվեստի կամ էլ առավելագույնը՝ հումանիտար ցիկլի ուսումնական առարկաների միջոցով: Այս կապակցությամբ ժամանակակից ճանաչված ռուս նկարիչ և մանկավարժ Մ. Բ. Նեմենսկին գրում է. «Գեղարվեստական կրթության համակարգը նախ և առաջ պետք է լինի միասնական, միավորի բոլոր առարկաները, արտադասարանական պարապմունքները, դպրոցականի հասարակական ողջ կյանքը, որտեղ պարապմունքի յուրաքանչյուր տեսակ գեղարվեստական մշակույթի և անձնավորության ձևավորման գործում ունի իր խնդիրը»:

Գեղարվեստական կրթությունն ընդհանուր դաստիարակչական գործընթացում անհամեմատ մեծ նշանակություն ունի կրտսեր դպրոցականների համար, քանի որ հենց այդ տարիքային փուլն է հանդիսանում կարևորագույնը երեխայի հուզա-զգայական աշխարհի ձևավորման և զարգացման համար, ինչը նպաստում է արտաքին աշխարհի գեղագիտական յուրացմանը և շրջապատի մարդկանց հետ ներդաշնակ հաղորդակցմանը: Հետևաբար, երեխայի գեղարվեստական կրթությունը պետք է սկսել ամենավաղ տարիքից, երբ նա սկսում է աշխարհը տեսնել յուրատեսակ գեղադիտակի միջով՝ իմաստավորելով և հստակ տարանջատելով գեղեցիկը տգեղից, վեհը նսեմից: Գեղարվեստական կրթության գործընթացը, պայմանավորված տարիքային զարգացման առանձնահատկություններով, ավելի ինտենսիվ է դառնում կրտսեր դպրոցական տարիքում, երբ մանկան մեջ առավել վառ են դրսևորվում գեղարվեստական հասկացությունների վերաբերյալ պատկերացումները: Կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթությունը նրանց գեղարվեստական իմացության և գեղարվեստական գործունեության հիմքերի ձևավորման գործընթացն է՝ որակապես նոր մակարդակով, որը նպաստում է երեխայի՝ գեղեցիկը ընկալելու և զգալու ունակությունից գեղեցիկի

[9]Հովսեփյան Վ.Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Երևան, 1979, էջ 20:

օրենքներով ստեղծագործելու ունակության անցմանը[10]: Տարրական դպրոցում գեղարվեստական կրթության գործընթացի ինքնատիպությունը հիմնականում պայմանավորված է կրտսեր դպրոցականների ընդհանուր տարիքային առանձնահատկություններով, որոնք այն հոգեբանական ֆոնն են, որի հիման վրա տեղի է ունենում կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթությունը: Շատ հաճախ «գեղեցկություն» գեղարվեստական կատեգորիայի ընկալումը երեխայի մոտ գալիս է մեծահասակի գնահատականների միջոցով, երբ երեխաները պատրաստակամորեն օգտագործում և յուրացնում են ծնողների և ուսուցիչների գեղարվեստական կրթությունը:

Կրտսեր դպրոցականների գեղարվեստական կրթության գործընթացում պետք է առաջնորդվել այն փաստով, որ երեխայի երևակայության ստեղծած գեղարվեստական պատկերը միշտ իրավիճակային և սուբյեկտիվ է, առավելապես արժեքավոր է միայն ստեղծագործողի համար, և եթե ստեղծված ապրանքը իրացվում է արտաքին աշխարհում, ապա դա սովորաբար այնքան էլ կատարյալ չէ: Միևնույն ժամանակ, երեխան տպավորությունները համատեղում է զարմանալի հեշտությամբ[11]:

Գեղարվեստական կրթության կազմակերպումը տարրական դպրոցում կրում են անհատական և տարբերակված բնույթ: Այն իրականացվում է համատեղ գործունեության միջոցով քանի որ յուրաքանչյուրը ընկալում է ստացված տեղեկատվությունը այլ կերպ: Առաջին հերթին, հետազոտողները նշում են կրտսեր դպրոցական տարիքում իրականացվող գեղարվեստական կրթության գործընթացի առանձնահատուկ արդյունավետությունը: Այսպիսով, Ա.Ա. Մելիք-Փաշաևը և Ն.Ն. Նովլյանսկայան ցույց տվեց, որ, համեմատած այլ տարիքային խմբերի հետ, հենց կրտսեր դպրոցականներն ունեն բարենպաստ նախադրյալներ գեղարվեստական կրթության համար և, ըստ իրենց արդյունքների, ավելի մոտ են արվեստի մասնագիտությունների մեծահասակներին (պրոֆեսիոնալ նկարիչներ, երաժիշտներ, կատարողներ), քան դեռահասներ և մեծահասակները, որոնք ոչ մի կապ չունեն նրանց հետ, գեղարվեստական գործունեության հետ:

Սուխոմլինսկին գրել է, որ մանկության շրջանում զգայունությունը գեղեցկության նկատմամբ անհամեմատ խորն է, քան անհատականության զարգացման հետագա ժամանակահատվածներում: Այն, ինչ բաց է թողել մանկության տարիները, շատ դժվար է, գրեթե անհնար է հասնել հասուն տարիքում: Երեխայի հոգին հավասարապես զգայուն է ինչպես հայրենի բառի, այնպես էլ բնության գեղեցկության և երաժշտական մեղեդու նկատմամբ: Ընտանիքում երեխան բազմիցս հանդիպում է այնպիսի միջոցների, ինչպիսիք են պապիկ տատիկների երգած երգերը, Ամանորին, Տյառնընդառաջին, Սուրբ Ձատկի տոնին կիրառվող բազմաթիվ զարդարանքները, որոնք իրենց հերթին մեծ դեր են ունենում երեխայի գեղագիտական ճաշակի ձևավորման գործում: Հաշվի առնելով այս հանգամանքը ծնողները պետք է մեծ ուշադրություն դարձնեն այդ ամենին և երեխաներին ներգրավեն այդ գործընթացների մեջ: Երեխան տեսնելով որ ծնողը գեղարվեստական արժեք

---

[10]Ներսիսյան Լ. Ս., Կրթություն և գեղագիտություն, Եր., 2002, էջ 48:

[11]Волчегорская Е.Ю. Художественно-эстетическое воспитание в начальной школе: лекция / Е.Ю. Волчегорская. – Челябинск: Изд-во Челяб. гос. пед ун-та, 2010, ст 29:

ներկայացնող զարդանախշերին տալիս է մեծ կարևորություն և այն կիրառում է ազգային տոների ընթացքում, կսկսի ինքն էլ հետաքրքրություն դրսևորել այդ ամենի նկատմամբ և կմեծանա ու դպրոց կգնա արդեն իսկ որոշակի գեղարվեստական արժեքներ ունենալով: Իսկ դպրոցում ուսուցիչն այդ հիմքի վրա կսկսի դաստիարակել գեղագիտորեն զարգացած և ներդաշնակորեն մեծացող անձնավորություն:

«Դպրոցը և հասարակությանը» գրքում Տ. Դյուիին բացահայտեց միջավայրի դերը անձի կրթության գործում և հիմնավորեց դպրոցը որպես երեխայի կյանքի և զարգացման միջավայր դիտարկելու անհրաժեշտությունը: Նա նշում է, որ դպրոցը պետք է լինի «Մանկավարժականացված միջավայր»: Այդ դեպքում «Մենք դաստիարակում ենք ոչ թե ուղղակիորեն, այլ միջավայրի միջոցով»: Նա առանձնացնում է դպրոցին հատուկ 3 գործառույթ[12]:

Դպրոցը պետք է՝

1. ստեղծի պարզեցված միջավայր,
2. աճող անհատին պաշտպանի սոցիալական միջավայրի անընդունելի գծերից,
3. փոխհատուցի սոցիալական միջավայրի անցանկալի ազդեցությունները, յուրաքանչյուր մարդու համար ստեղծի հնարավորություններ այն սահմանափակումները հաղթահարելու համար, որոնք իր վրա ի ծնե դրել են որոշակի փոքր խմբի պատկանելիությունը և տա նրան ավելի լայն շրջապատի հետ շփվելու հնարավորության:

Փաստորեն Դյուիին մշակեց կրթության այնպիսի մի մոդել, որտեղ մարդու անհատական զարգացումը և սոցիալիզացիան ներդաշնակվում և լրացնում են միմյանց:

Հայ մանկավարժության մեջ երեխայի միջավայրը հումանացնելը, դրա թողած բացասական ազդեցությունը չեզոքացնելու և մանկավարժական ազդեցությունը ուժեղացնելու հարցին անդրադարձել են մասնավորապես Բահաթրյանը, Լ. Ճանթը և ուրիշներ:

Ի՞նչ է նշանակում հումանացնել երեխայի միջավայրը: Ըստ Կոիլովայի դա նշանակում է «Ավագների և մանկական կոլեկտիվների համագործակցության ապահովում, համամարդկային և ազգային արժեքների մասին ինտեգրացված գիտելիքներ և դրանց նկատմամբ վերաբերմունքի դաստիարակություն»:

Որո՞նք են ուսումնական հաստատությունում՝ դպրոցում, երեխայի միջավայրի հումանացմանման մանկավարժական պայմանները[13].

1. Երեխային շրջապատող միջավայրի կազմակերպումը կրթության և դաստիարակության հիմնական կարևոր խնդիրներից մեկը համարելը, գիտակցելը և ընդունելը:

---

[12]Թովուզյան Աիդա, Միջավայրի հասունացումը որպես երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչ, Մանկավարժություն ամսագիր, էջ 211:

[13]Թովուզյան Աիդա, Միջավայրի հասունացումը որպես երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչ, Մանկավարժություն ամսագիր, էջ 212:

2. Ճիշտ կազմակերպված միջավայրը, որպես անձի և հետագայում որպես անհատականության ձևավորման միջոցներից մեկը դիտելը:

3. Երեխայի դիմազրկության անթույլատրելիությունը և երեխայի ինքնատիպության պահպանումը որպես մանկական տարաիքի հումանացման կարևոր ուղղություն ընդունելը:

4. Ամբողջական հանրակրթական տարածքի, հիմնական և լրացուցիչ կրթության, դասարանական և արտադասարանական գործունեության հումանացման ապահովումը և այդ տարածքում մշակութաստեղծագործական միջավայրի ստեղծումը:

5. Դպրոցում երկխոսական մանկավարժական գործունեության ապահովումը:

6. Ընտանիքում և դպրոցում արտաքին բարենպաստ միջավայրի, երեխայի հոգեկան և բիոլոգիական գոյության և զարգացման համար /սնունդ, հագուստ, կահույք, ուսումնական և կրթական այլ միջոցներ/ պայմանների ստեղծումը:

7. Ավագների և երեխաների համատեղ ակտիվություն ապահովելու նպատակով ընտանիքում և դպրոցում մարդկայնացված միկրոսոցիալական միջավայրի ստեղծումը /հումանիստական հարաբերություններ, շփում, հոգեբանական առողջ մթնոլորտ, միասնական ստեղծագործական, աշխատանքային գործունեություն և այլն/:

8.Դաստիարակչական սուբյեկտների փոխգործունեության, հանդուրժողականության և ուսումնական հաստատությունում ընտանեկան հոգեբանական մթնոլորտի, հարմարավետության հաստատում:

9. Դպրոցում և ընտանիքում շրջապատող միջավայրի կայունության, դինամիկության ապահովում երեխայի ճաշակի, տրամադրության, մանկավարժական տարբեր խնդիրներին համապատասխան:

10. Երեխայի համար դպրոցը «դպրոցն իմ տունն է» գաղափարին համապատասխանեցնելը:

11. Դպրոցը համայնքի մշակութամանկավարժական կենտրոն դարձնելը, ընտանիքի, հասարակության հանդեպ բաց լինելը ապահովելը:

12. Մանկավարժական կոլեկտիվը որպես համախոհների և միասնական մանկավարժական պահանջներ ունեցող և դնող խումբ դիտելը և կայացնելը:

13. Մանկավարժական և աշակերտական կոլեկտիվների առողջ համագործակցության և դպրոցի, ծնողների ու համայնքի փոխաջակցության ապահովումը:

14. Դպրոցում և դպրոցից դուրս գործող մանկական միավորումների և աշակերտական ինքնավարության մարմինների ու դպրոցի գործունեության համաձայնեցումը:

15. Դպրոցում և ընտանիքում շփման բարձր և առողջ մակարդակի ապահովում և ազատ շփման, փողոցի ազդեցության չեզոքացման մանկավարժական վարպետության առկայությունը /ինչքան մեծանում է մարդը, այնքան մեծանում է նրա շրջապատը/: Մարդու հոգեբանական զարգացումը /կրթությունը, արժեքները, նորմերը, սովորությունները, վարվելակերպը/, նրա ամբողջ կյանքի ոճը կախված է նրա շփման աստիճանից, շրջապատի մեծությունից: Եվ որքան շատ է շփվում մարդը,

այնքան շատ բան է իմանում իր մասին, այնքան պատրաստ է համագործակցության, ինքնավստահ է դառնում, որն ավելի մեծ տարիքում վերածվում է ինքնագնահատման:

16. Երեխայի մեջ անձնային այնպիսի որակների ձևավորումը, որոնք ընդունակ լինեն դիմակայել ոչ միայն սոցիալական շրջապատի, փողոցի վատ ազդեցություններին, այլև այն փոխելուն: Սակայն անհրաժեշտ է ի նկատի ունենալ, որ երեխայի լիարժեք զարգացման համար անհրաժեշտ է, որ նրա կենսագործունեության ողջ միջավայրը հումանիստական ուղղվածություն ունենա:

Դաստիարակության խնդիրն է հաշվի առնել փողոցի ազդեցությունը, սովորեցնել երեխային ոչ միայն փողոցում ինքնահիրացվել, այլև դիմակայել բացասական ազդեցություններին առանց դեֆորմացնելու սեփական դրական որակները: Միջավայրի մանկավարժությունն իրավացիորեն գտնում է, որ հնարավոր չէ երեխային մեկուսացնել փողոցից, դա պետք էլ չէ անել, որովհետև այն հղի է լուրջ դժվարություններով: Փողոցից երեխային մեկուսացնելը հետագայում դժվարացնում է անձի շփումը այլ մարդկանց հետ: Նման երեխաները փողոցում տարբեր իրավիճակներում իրենց վստահ չեն զգում, չեն հասկանում ինչ է կատարվում իրենց շուրջը, չեն կարողանում այս կամ այն երևույթներին արձագանքել: Այս ամենի հետևանքով նրանք կարող են դառնալ հանգամանքների, այլ մարդկանց բացասական ազդեցության զոհ: Ա. Տ. Շացկին խորհուրդ է տալիս ուսումնասիրել և մանկավարժեցնել միջավայրը: Այսինքն, միջավայրի տարերային և բացասական ազդեցությունները վերածել մանկավարժական նպատակաուղղված, կազմակերպված, կառավարվող գործոնի: Լ. Շանթի տերմինով, անկազմակերպ դաստիարակությունը վերածել կազմակերպված դաստիարակության գործոնի: Շացկին գտնում է, որ միջավայրի մանկավարժեցման էությունը դրա մանկավարժական ներուժի հայտնաբերման և զարգացման մեջ է, շրջապատի, բնակչության հետ մշակութաստեղծագործական աշխատանք տանելու, միջավայրի բոլոր սուբյեկտների դաստիարակչական ջանքերը համախմբելու, սոցիալ-մշակութային յուրատեսակ տարածք ստեղծելու մեջ է:

Գեղարվեստական կրթության խնդիրները բազմազան են ու բազմաբնույթ: Դրանց շարքին են դասվում .

ա)սովորողների գեղարվեստական ընկալումների ու ըմբռնումների ձևավորումն ու դաստիարակումը,
բ)գեղարվեստական դատողությունների ու մտածողության ձևավորումը, գ)գեղարվեստական պատկերացումների ձևավորումն ու դաստիարակումը, դ)գեղարվեստական զգացմունքների ու գնահատումների դաստիարակումը, ե)գեղարվեստական ճաշակի դաստիարակումը,
զ)գեղարվեստական ինքնադաստիարակությունը և այլն:

Նշված խնդիրների լուծումից է կախված սովորողների գեղարվեստական կրթության իրագործումը: Այդ խնդիրները կարող են լուծել նախ և առաջ այն ուսուցիչները, ովքեր ունեն մասնագիտական կրթություն և իրենց մանկավարժական վարպետությամբ հասու են դրան և որոշ չափով նաև այն ուսուցիչները, ովքեր ունեն համապատասխան գիտելիքներ արվեստի տարբեր ձևերից ու ժանրերից (օրինակ՝ թե կերպարվեստը հասկանալու համար ինչ նշանակություն ունեն ձևի, գույնի, լույսի,

ստվերի, երաժշտությունը հասկանալու համար՝ ռիթմի և ներդաշնակության, գեղարվեստական խոսքի արտահայտչական միջոցների մասին գիտելիքները և այլն)[14]:

Կրտսեր դպրոցականների գեղագիտական կուլտուրան բարձրացմնելու նպատակով պետք է նրանց պարզաբանել արվեստի ուղղությունների, ժանրերի մասին գիտելիքների նշանակությունը ու ձգտել դրանք դարձնել նրանց սեփականությունը. դա ոչ թե այն բանի համար, որպեսզի նրանք անպայման դառնան արվեստի աշխատողներ, այլ առաջին հերթին նրանց գեղագիտորեն զարգացնելու և դաստիարակելու համար: Սա պայմանավորված է գեղարվեստական դաստիարակության խնդիրների ամբողջական համալիրով, որի լուծումը պարտադիր է և դրա հիման վրա նաև՝ կրտսեր դպրոցականների գեղագիտական ճաշակի հիմնահարցը:

Իմանալու համար, թե ինչ է գեղագիտական ճաշակը, թե ինչպես իրականացնել դրա կրթությունն ու դաստիարակությունը, նախ պետք է իմանալ, թե տվյալ կրտսեր դպրոցականն ինչ առարկաներով է շրջապատում իրեն, ինչն է գերադասում գեղանկարչության, երաժշտության, գեղարվեստական գրականության մեջ, թե որքանով է ընդունակ վերլուծել գրական կերպարը, թե ինչպես է հագնվում, կառավարում իր նիստ ու կացը, իր առօրյան, իր շարժումները, քայլքը, թե ինչպես է կահավորում իր բնակարանը և այլն: Ուրեմն դրանք այն չափանիշներն են, որոնք որոշում են անձի գեղագիտական ճաշակը:

Գեղագիտական ճաշակը գեղեցիկը զգալու ու գնահատելու ընդունակությունն է, գեղեցկության չափանիշները հասկանալու կարողությունը, գեղեցիկի նկատմամբ հուզական՝ զգայունակությունը:

Վերը նշված մյուս խնդիրները լուծելու համար պետք է հաշվի առնել արվեստի տարբեր բնագավառների յուրահատկությունները, իմանալ, թե դրանցից յուրաքանչյուրն ինչի վրա է հենվում, որն է նրա հիմքը: Այսպես, աշակերտներին պետք է գաղափար տալ, որ երաժշտության համար հիմք են հանդիսանում ձայների ներդաշնակությունը հասկանալու, զգալու ընդունակությունը, իսկ կերպարվեստի ստեղծագործությունը հենվում է լույսի ու ստվերի, գույների բազմազանությունը տեսնելու և ըմբռնելու վրա: Եթե կրտսեր դպրոցականներն այդ կարգի գիտելիքներ չունեն, նրանք չեն կարող հասկանալ արվեստը, նրա առանձնահատկությունները և հետևապես չեն կարող զարգացնել իրենց գեղագիտական ճաշակը[15]:

Գեղագիտական խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն կարող են ունենալ սովորողներին արվեստի բնագավառներին մշտապես հաղորդակից դարձնելը, պարզաբանելով դրանցից յուրաքանչյուրի բովանդակությունը, նպատակները և այլն: Կարևոր նշանակություն ունեն արվեստի վերաբերյալ գրքերի ընթերցումը, երաժշտության ունկնդրումը, գեղարվեստական արձակին և պոեզիային հաղորդակցումը, թատրոն հաճախելը և կինոդիտումները: Այդ ամենը ինքնանպատակ չպետք է լինի: Նախասիրական պարապմունքների ընթացքում տեսական թեմատիկ աշխատանքներից զատ պետք է քննության առարկա դառնան ընթերցված գիրքը, դիտած կինոնկարը կամ

---

[14]Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ս.Ա., Մանկավարժություն, էջ 368:
[15]Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ս.Ա., Մանկավարժություն, էջ 369:

ներկայացումը: Այդ պարապմունքները սովորողներին լայն ասպարեզ են տրամադրելու նրանց ստեղծագործական ունակությունների զարգացման և արվեստի տեսության ընդհանուր հիմունքներին ծանոթանալու համար[16]:

Գեղագիտական դաստիարակության կարևոր ուղիներից կամ մեթոդներից են վերլուծությունը, բացատրությունը, վարժությունները, դասախոսությունները, գեղարվեստական խնդիրների լուծումը, բանավեճը, ինքնահաղթահարումը, ինքնաներշնչումը, ինքնահամոզումը, ինքնաընտելացումը, ինքնատիրապետումը:

Դպրոցում կրտսեր դպրոցականների գեղագիտական դաստիարակության իրականացմանը կարող են օգնել երեք՝ իրար փոխկապակցված օղակներ. գեղագիտական լուսավորության նոր ուղիները, գեղագիտական զգացմունքների ձևավորումը և գեղարվեստական գործունեության փորձի հարստացումը[17]:

Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության իրագործման առաջին ուղին գեղագիտական լուսավորությունն է (որը կարելի է իրականացնել արտադասարանային և արտադպրոցական դաստիարակչական աշխատանքների ընթացքում): Սակայն այդ ամենը դեռևս բավարար չէ գեղագիտական լուսավորության համար: Աշակերտները լսողի, դիտողի, ունկնդրողի դերում հանդես գալուց բացի, պետք է հանդես գան նաև ստեղծագործողի, կերտողի, կատարողի դերում: Ահա այդ ամենը նկատի ունենալով, փորձառու դասվարը, հաշվի առնելով կրտսեր դպրոցական տարիքի երեխաների տարիքային հնարավորություններն ու հակումները, դպրոցում կազմակերպում է թատերական, երգի ու պարի, նկարչության, ասմունքի, երաժշտության խմբակներ ու աստիճանաբար զարգացնում նրանցում ընդգրկվածների տեսական ու պրակտիկ գործունեությունը:

Դպրոցում գեղագիտական միջոցները կամ համակարգը շատ ընդարձակ են: Այդ համակարգի մեջ կարելի է դասել իմացությունը, ուսումնական բոլոր առարկաները, խաղը, ուսումնական աշխատանքը, թատերական արվեստը, գեղարվեստական գրականությունը, բնությունը և այլն: Բոլոր միջոցներն էլ առանձին-առանձին մեծ դեր են խաղում կրտսեր դպրոցականների տարիքի երեխաների գեղագիտական կուլտուրայի զարգացման համար:

Իմացության միջոցով կրտսեր դպրոցականները թափանցում են երևույթների, առարկաների, գործընթացների խորքը, գաղափար կազմում դրանց միասնության, փոխկապվածության, փոխազդեցության, հատկությունների, հակադրությունների, պատճառահետևանքային կապերի, ծագման ու զարգացման մասին: Իմացության առաջին փուլն ընկալումն է: Չէ որ իմացության գործընթացը սկսվում է կենդանի հայեցողությունից: Իմացության մեջ վճռորոշ դեր է խաղում մտածողությունը: Երևույթի, առարկայի շուրջ մտածող մարդն այն չէ, ինչ ասենք՝ չմտածողը, անգետը: Այն, ինչ երևույթի, առարկայի մեջ տեսնում է մտածողը, գիտակը, չի կարող տեսնել չմտածողը,

[16]Քոչարյան Լ., Ընտանիք և դպրոց, Գեղագիտական դաստիարակության խնդիրները, Երևան 2010, էջ 15:
[17]Ամիրջանյան Յու.Ա., Սահակյան Ս.Ա., Մանկավարժություն, էջ 370:

անգետը: Ուրեմն դասվարի խնդիրն է մշտապես խթանել ու զարգացնել կրտսեր դպրոցականների գեղագիտական իմացությունը, ակտիվացնել հատկապես նրանց մտածողությունը և այն ստուգել գործնականում: Առանց այսպիսի գործունեության, անհնար է ձևավորել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների գեղագիտական մտածողությունը:

Դպրոցը ընտանիքի հետ միասին պետք է վերահսկի երեխաների վերաբերմունքը ինֆորմացիոն համակարգերի, ծրագրերի նկատմամբ, պիտի կարողնա դրանք մանկավարժորեն ճիշտ օգտագործել ուսուցման և դաստիարակության գործում: Այլ խոսքով, դպրոցը պետք է օգնի ընտանիքին՝ երեխայի տեղեկատվական միջավայրի մանկավարժականացման գործում, այսինքն՝ ծնողներին և երեխային սովորեցնի մանկավարժորեն գրագետ օգտագործել ՏՀՏ ոլորտը և հակառակը, կանխարգելել դրանց բացասական ազդեցությունները:

Այսպիսով, երեխայի միջավայրի հումանացումը երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչն է: Այն կախված է նրա միջավայրում գտնվող բոլոր «մեծերի» համագործակցությունից և նրանից, թե որքանով են այդ «մեծերը» պատրաստ աշխարհը, համայնքը հարմարեցնել երեխաների կարիքներին և այն դարձնել երեխաների կյանքի համար պիտանի:

Գեղարվեստական կրթությունը, որը հանրակրթության և լրացուցիչ կրթության համակարգում ունի իր ուրույն տեղը, ենթարկվել է տարբեր տեսակի փոխակերպումների՝ կախված սոցիալ – մշակութային իրավիճակի փոփոխությունից: Հանրակրթության համակարգում տարրական դպրոցը երեխայի կյանքի կարևոր օղակն է, ուստի ուսուցիչների առջև պատասխանատու խնդիր է դրված՝ կրթել ու դաստիարակել մատաղ սերնդին, ստեղծել կրթական բարենպաստ միջավայր, որտեղ լիարժեքորեն կդրսևորվեն երեխայի հնարավորությունները, կզարգանան նրանց իմացական և սոցիալական ոլորտները, մտավոր, հոգեկան, ֆիզիկական կարողությունները:

Իրականությունը մանկավարժին թելադրում է հաշվի առնել աճող սերնդի սոցիալ – մշակութային գործունեության անհրաժեշտությունը: Ակնհայտ է, որ սոցիալականացումը՝ որպես միջավայրի հետ անձի փոխազդեցության գործընթաց, կարող է հաճախ լինել հակասական, հատկապես եթե սոցիալ – մշակութային գործունեությունը չի նպաստում անձնային որակների ձևավորմանը:

Կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության վրա ազդում են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին մի շարք պայմաններ: Փոխվում են հասարակությունը, տնտեսական վիճակը, երեխայի սոցիալական դերը, ընկերները, սովորությունները, հետաքրքրությունները, նախասիրությունները, ներաշխարհը, որոնք իրենց հետքն են թողնում գեղարվեստական կրթության վրա՝ հաճախ դառնալով այդ գործընթացի արդյունավետ իրականացման հիմք, անհրաժեշտ պայման:

Գեղարվեստական կրթության բովանդակության մեջ ներառված են մի շարք դասընթացներ՝ կերպարվեստ, տեխնոլոգիա, երաժշտություն, ազգային երգ ու պար, գրականություն , որոնք նպաստում են գեղարվեստական պատկերացումների, գեղագիտական ճաշակի, գիտելիքների համակարգի ձևավորմանը: <<Մանկական կյանքի հիմնական կողմերի՝ ֆիզիկական աշխատանքի, խաղի, արվեստի, մտավոր և սոցիալական զարգացման միջև գոյություն ունի որոշակի կապ,

դրսևորվում է մշտական փոխազդեցություն, և ի վերջո այս կամ այն փոփոխությունները մեկ ուղղության մեջ առաջ են բերում համապատասխան փոփոխություններ մյուս բնագավառներում>>,- գրում է Ս. Շացկին: Գրեթե բոլոր ուսումնական առարկաներն ունեն երեխաների գեղարվեստական կրթության լայն հնարավորություններ: Հանրակրթության պետական չափորոշչում ուսումնական բնագավառների շրջանակներում նկարագրված են սովորողների գեղարվեստական կրթության և կարողությունների ձևավորմանն ուղղված պահանջներ: Այսպես, օրինակ, << Արվեստ և արհեստ >> ուսումնական բնագավառը միտված է գեղարվեստական կրթության և գեղագիտական դաստիարակության միջոցով անձի մտավոր և ստեղծագործական կարողությունների բացահայտմանն ու զարգացմանը, իրականացվում է միջառարկայական կապերի ակտիվ ներգրավմամբ՝ արվեստի և ժողովրդական արհեստների տարբեր տեսակներին հաղորդակցվելու, ինքնուրույն գեղարվեստական – ստեղծագործական գործունեություն ծավալելու միջոցով: Այդ ուսումնական բնագավառը նպաստում է սովորողի ինքնաճանաչմանը և ինքնարտահայտմանը, մտահորիզոնի ընդլայնմանը, երևակայության, քննադատական, վերլուծական և ստեղծագործական մտածողության զարգացմանը, վարպետության, ստեղծարարության, կատարողական առանձնահատկությունների զարգացմանը: Այնուհանդերձ հանրակրթական դպրոցում ուսումնական դասընթացների շրջանակներում գեղարվեստական կրթության հնարավորությունները սահմանափակ են, և անհրաժեշտ է այդ բացը լրացնել ինչպես արտադասարանային, արտադպրոցական, նախասիրական պարապմունքների միջոցով, այնպես ել հաշվի առնելով ընտանիքի դաստիարակչական ներուժը:

Գեղարվեստական կրթությունը կյանքում և արվեստում գեղեցիկի ընկալման, գեղագիտական զգացումների, ճաշակի, պատկերացումների, պահանջմունքների, գեղեցիկի գնահատման կարողությունների ձևավորման գործընթաց է: Այն ուղղված է այնպիսի կարևոր խնդրի լուծմանը, որտեղ երեխան կարող է տեսնել, զգալ, գնահատել գեղեցիկը, կատարյալը, ներդաշնակը, իր ներգործությամբ գեղեցկացնել շրջապատը: Իրեն շրջապատող աշխարհը և մարդկային հարաբերությունները խորությամբ բացահայտելուն և ճանաչելուն մեծապես նպաստում է համակարգված և նպատակաուղղված գեղարվեստական դաստիարակությունը դեռևս վաղ տարիքում ընտանիքում, այնուհետև կրտսեր դպրոցական տարիքում ուսումնական բոլոր առարկաների հնարավորությունների լիարժեք օգտագործման ընթացքում, ինչպես նաև արտաուսումնական և արտադպրոցական պարապմունքների ընթացքում:

Այսպիսով՝ սոցիալ – մշակութային միջավայրը, միավորելով ընտանիքի և դպրոցի դաստիարակչական ներուժը, նպաստում է երեխաների գեղարվեստական կրթությանը:

1.2 ՍՈՑԻԱԼ – ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԴԵՐԸ ԵՐԵԽԱՅԻ ԱՆՁԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ընտանեկան դաստիարակության շարունակականության ապահովումն էապես պայմանավորված է դպրոցի աշխատանքով: Դպրոցը չի կարող փոխարինել ընտանիքին, սակայն կարող է բարձրացնել

նրա դերը դաստիարակության հարցում: Ցանկալի է, որ ընտանիքն ու դպրոցն աշխատեն նույն ուղղությամբ: Դպրոցի և ընտանիքի միջև հակասությունը բացառվում է այս հարցում: Նրանց համագործակցության կենտրոնում երեխան է, որն իր կրթության և զարգացման գլխավոր դերակատարն է դպրոցում և ընտանիքում[18]:

Դպրոց-ընտանիք համագործակցությունը մի գործընթաց է, որը չի ավարտվում ուսումնառության այս կամ այն տարում, այլ շարունակական է և ներգրավված կրթադաստիարակչական ամբողջական գործընթացի մեջ, և նրա ապահովումը՝ ժամանակակից պայմաններում դպրոցի, ընտանիքի, հասարակության զարգացման տեսանկյունից կարևորագույն նպատակ է համարվում[19]:

Ընտանիք-դպրոց փոխհարաբերության մեջ կողմերից յուրաքանչյուրը յուրովի պատասխանատվություն է կրում մյուսի հանդեպ: Եթե դպրոցն ու ծնողները հաջողությամբ համագործակցում են, ինչը աշակերտի կրթական վճռորոշ գործոն է, ապա հաղթանակն ապահովված է: Մեծ մանկավարժ Ժան-Ժակ Ռուսոն նկատել է, որ ընտանիքից հետո յուրաքանչյուր դաստիարակ ավելի քիչ ազդեցություն ունի երեխայի վրա, քան նախորդը:

Ըստ Մակարենկոյի՝երեխային դաստիարակում է ամեն ինչ՝ առարկաները, երևույթները, սակայն ամենից շատ մարդիկ և, առաջին հերթին՝ ծնողները: Փոխվել է ուսուցիչ-աշակերտ-ծնող եռանկյունին: Դպրոցի և ընտանիքի համագործակցության մեջ առաջնային դերը դպրոցինն է, որովհետև հասարակության կրթական մակարդակի բարձրացումը դպրոցի գործառույթն է: Դպրոցն ու ընտանիքը համագործակցության կայացման գործում պետք է խուսափեն հասարակության մեջ կարծրացած, միմյանց ‹‹վերևից նայելու» սովորությունից: Փոխհարաբերությունը պետք է լինի ոչ թե երկու կողմերի համակրանքի կամ հակակրանքի վրա հիմնված, այլ միմիայն ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կայացմանը միտված հստակ ծրագրերի տեսքով: Օրինակ, եթե աշակերտի ծնողը տվյալ առարկայի մասնագետ է և գտնում է, որ կարող է օգտակար լինել դպրոցին իր կազմակերպած սեմինարներով, բանավեճերով, ապա պետք է առաջարկի իր օգնությունը: Համագործակցության ընթացքում այս երկու սոցիալական ինստիտուտները ոչ թե պետք է իշխեն, պարտադրեն միմյանց, այլ, ընդհանուր նպատակներ ունենալով, լրացնեն մեկմեկու: Այս հարցի հետ կապված Ս.Մովսիսյանը գտնում է. ‹‹Դպրոցը չի կարող է ընտանիքի նկատմամբ հանդես գալ որպես կառավարող: Դպրոցն և ընտանիքն կազմում են սոցիալական միկրոմիջավայրի կառուցվածքի առանձին մասեր, որոնք գտնվում են փոխկապակցության մեջ: Երեխաների դաստիարակության բնագավառում սոցիալական այս

---

[18]Խոջայան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, ‹‹Նախաշավիղ», գիտամեթոդական հանդես, 1,2017, էջ 56:

[19]Ղուկասյան Լ. Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ուղիները հանրակրթության պայմաններում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 198:

համակարգերի հարաբերության հիմնական հատկանիշը նրանց համագործակցությունն է, որը արտահայտվում է փոխադարձ ինֆորմացիայով, համատեղ աշխատանքով և փոխօգնությամբ: Համագործակցության այդ միջոցները ոչ միայն նպաստում են ընտանեկան, այլև դպրոցական դաստիարակության զարգացմանը»[20]:

Ժամանակակից հասարակության մեջ երեխաները և՛ ընտանիքում, և՛ դպրոցում պիտի ստանան միասնական ու ներդաշնակ դաստիարակություն: Այդ տեսակետից գերխնդիր է դառնում երեխաների, ծնողների և դպրոցների միջև գործարար ու նպաստավոր համագործակցության կառուցումը: Այդ երկու ինստիտուտների համագործակցությունը և փոխներգործությունը մանկավարժական գործընթացի բոլոր փուլերում պետք է կազմակերպվեն պլանավորված ու համակարգված ձևով: Ծնողները և ուսուցիչները նույն երեխաների դաստիարակներն են: Հետևաբար դաստիարակությունն արդյունավետ կլինի միայն նրանց համագործակցության պայմաններում, երբ ձևավորվեն դաստիարակության գործընթացի միասնական նպատակներ, ձգտումներ ու հայացքներ, համատեղ ուժերով մշակվեն դաստիարակչական խնդիրներն ու դրանց լուծման ուղիները:

Կրթության արդիական մեթոդներն օգնում են, որ երեխան գիտելիքներ ստանա՝ օգտագործելով իր բոլոր ընդունակությունները, ինչպես և վստահություն ձեռք բերի սեփական ուժերի նկատմամբ: Առանց ծնողների օգնության և աջակցության հնարավոր չէ լիարժեք արդյունքի հասնել: Ծնողների հետ շփումը օգնում է ուսուցչին՝ տեղյակ լինել, թե ինչ է կատարվել տանը երեխայի հետ, որ այս կամ այն կերպ ազդել է նրա հոգեբանության, վարքի և տրամադրության վրա: Դա ուսուցչին թույլ է տալիս հասկանալ և օգնել երեխային: Ընտանիքը և դպրոցը դաստիարակության երկու հիմնական հավասարազոր սուբյեկտներն են, որոնք ազդում են երեխայի վրա մանկության և պատանեկության տարիներից: Միայն այս երկու օղակների համագործակցության դեպքում է հնարավոր ձևավորել աշակերտների մեջ բարձր բարոյական որակներ, ապահովել նրանց աշխատանքային ուսուցումն ու մասնագիտական կողմնորոշումը: Ուսուցիչ-ծնող շփման ընթացքում անհրաժեշտ է պահպանել հետևյալ պայմանները՝

1. Խոսակցությունը չսկսել անմիջապես երեխայի հետ կապված հիմնախնդրից:
2. Չշտապել անմիջապես լուծել այն:
3. Հետաքրքրություն ցուցաբերել ծնողի և նրա աշխատանքի նկատմամբ:
4. Քննարկել այն հուզական վիճակները, որոնք առաջ են գալիս դպրոցի, ուսուցիչների, երեխաների պատճառով:
5. Ուշադիր լսել և ընդունել այն, ինչ ասում է ծնողը. փորձել հասկանալ, թե ինչու է նա այդպես մտածում:
6. Ծնողներին հատկացնել այնքան ժամանակ, ինչքան անհրաժեշտ է տվյալ իրավիճակում:

[20]Մովսիսյան Ս.Ա., Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980, էջ 170:

7. Ծնողներին տեղեկություններ հաղորդել անձամբ և ոչ թե երեխաների կամ երրորդ անձի միջոցով [21]:

Հայտնի է, որ բոլոր ծնողները չէ, որ տիրապետում են երեխայի դաստիարակության ու նախնական ուսուցման նրբություններին, ինչպես նաև մանկավարժական մեթոդներին: Մինչդեռ, ի սկզբանե լինելով առաջին դաստիարակը և ուսուցիչը, ծնողը պարտավոր է ունենալ այդ կարողությունները: Այդ հարցը հիմնավորապես կարգավորվում է ծնող-ուսուցիչ կապի միջոցով. էական է թե ինչպիսին է նրանց մտահոգությունների բնույթը, որոնց առանցքը լինելու է կոնկրետ երեխայի ուսումն ու դաստիարակությունը և ապագա գործուն քաղաքացու նախադրյալների մշակումը օրեցօր փոփոխվող ու մեծացող մանկան բնավորության մեջ: Ուսուցիչը կապեր հաստատելով աշակերտի ընտանիքի հետ՝ լուծում է հետևյալ խնդիրները՝

1. Ճանաչել երեխայի ընտանիքը:
2. Ուսումնասիրել երխայի սոցիալական միջավայրի ազդեցությունը նրա անձի ձևավորման վրա:
3. Օգնել ծնողներին՝ ընտանեկան պայմաններում երեխային դաստիարակելու:
4. Կազմակերպել ծնողների մանկավարժական իրազեկումը:
5. Չեզոքացնել ընտանիքի բացասական ազդեցությունը[22]:

Ուսուցիչների և ընտանիքի փոխներգործության բնույթը պլանավորված է դպրոցի նկատմամբ ծնողների վերաբերմունքով, ինչպես նաև այն հանգամանքով, թե վերջիններս, ըստ իրենց իմացական կարողությունների, հայացքների ու դիրքորոշումների, որտեղ են իրենց տեսնում դաստիարակության գործընթացում:

Այսպիսով՝ միջավայրը լինելով կրթության և դաստիարակության կարևոր գործոններից մեկը, մեծապես ազդում է երեխայի աճի և ինքնազարգացման վրա: Ճիշտ կազմակերպված միջավայրը օգնում է երեխային ձևավորել որպես անձ, հետագայում նաև որպես անհատականություն: Իսկ այստեղ էլ շատ կարևոր է ուսուցիչ - ծնող առողջ համագործակցությունը:

1.3 ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ ՏՀՏ – ՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՄԲ

Կրտսեր դպրոցականի սոցիալականացման հիմնախնդիրը տարեց տարի դառնում է առավել արդիական: Բարդ, արագ փոփոխվող աշխարհում սոցիալական միջավայրը ժամանակակից սոցիալական ինստիտուտներից պահանջում է համակողմանի զարգացած որոշակի

[21]Տիգրանյան Լ., Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, «Նախաշավիղ» 4.2012, Գիտամեթոդական հանդես,էջ 61:

[22]Ջանիկյան Ս.,Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում, «Նախաշավիղ» 7.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 62:

կարողություններով և հմտություններով օժտված երեխայի կրթության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

Արդի տեղեկատվական – հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով միջավայրը երեխային ակտիվ տեղեկատվական հոսքերում արագ կողմնորոշվելու, ինքնուրույն գործելու, մտածողությունը զարգացնելու հնարավորություն է տալիս: Սրան նպաստում է նաև համակարգչային տեխնոլոգիաների կիրառումը կրթական հաստատություններում, որը տալիս է բացատրական – պատկերավոր ուսուցումից գործնականի անցման հնարավորություն, որի դեպքում երեխան դառնում է ուսումնական գործունեության ակտիվ սուբյեկտ:

Տեղեկատվական տեխնոլոգիաները, և երեխաների առօրեական ու անմիջական կապը համացանցի հետ, հաճախ ծնողների և ուսուցիչների անհանգստության պատճառ են դառնում: Իհարկե, անհնար է հերքել, որ կրտսեր դպրոցականները օրվա ընթացքում շատ ժամանակ են անցկացնում համակարգչի և հեռախոսների առջև, սակայն, ոչ որպես բուն տեղեկատվական օբյեկտ: Սակայն անհնար է հերքել նաև, որ ճիշտ և համապատասխան մոտեցման դեպքում, տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են հանդիսանալ կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության զարգացմանը նպաստող հիմնական գործառույթներից մեկը: Դպրոցականին վերոնշյալ եզրույթին բերելու համար անհրաժեշտ է օգնել և ուղղորդել նրան, տեղեկատվական տեխնոլոգիան օգտագործել դպրոցում հանձնարարված ինքնուրույն տնային աշխատանքներին ավելի լավ և հետաքրքիր կերպով պատրաստվելու համար: Օրինակ շարադրություն հանձնարարելիս (բնության, իրենց բակի, բակային խաղերի, ամառային արձակուրդների և այլնի մասին) ուղղորդել աշակերտին, որպեսզի լուսանկարի այն տարածքը, կամ օբյեկտը ինչի մասին պետք է ձևակերպի ու շարադրի իր մտքերը: Այդպես կրտսեր դպրոցականը էլ ավելի պատկերավոր կնկարագրի երևույթները ու կշարադրի սեփական մտքերը: Արդյունքում կզարգանա երեխայի գեղագիտական ճաշակը, կկարողանա ճիշտ և գրագետ կողմից ցույց տալ իրեն հանձնարարվածը, առաջադրանքը կատարել այլընտրանքային մոտեցմամբ, և ավելի դյուրին, ըմբռնելի ու պատկերավոր դարձնել այն, թե՛ իր, թե՛ դասընկերների համար: Այս դեպքում ավելի տեսանելի կլինի միջավայրի ազդեցությունը կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության գործում ՏՀՏ - ի կիրառմամբ:

Կամ էլ, ասենք, տարվա եղանակների վերաբերյալ շարադրանք գրելիս, համացանցում փնտրել հայտնի կոմպոզիտորների ստեղծագործությունները իրենց նախընտրած եղանակի վերաբերյալ, և շարադրանքը գրել ստեղծագործությունը ունկնդրելով: Յուրաքանչյուրը երաժշտությունից ստացած իր էմոցիաներով կհամեմի շարադրանքը արդյունքում ստանալով գեղագիտության, արվեստի ու գեղեցիկի գաղափարի վրա կառուցված աշխատանք: Կարելի է նաև դպրոցում, ուսուցչի օգնությամբ, սեփական շարադրանքը ընթերցել վերոնշյալ մեղեդու ներքո:

Վերոնշյալները պարզագույն օրինակներից են, ապացուցելու, որ ՏՀՏ ոլորտը պարզունակ կերպով կարելի է ծառայեցնել, որպես կրտսեր դպրոցականի գեղագիտական զարգացման միջոց:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում կազմակերպվեց էքսկուրսիա չորրորդ դասարանի աշակերտների մասնակցությամբ դեպի Էջմիածին և Օշական: Աշակերտներին հանձնարարվեց իրենց իսկ հեռախոսներով լուսանկարել տեղանքի տեսարժան վայրերը տեղեկատվական քննարկում կազմակերպելու նպատակով: Նկարահանումները կատարելուց հետո աշակերտները նկարները ուղարկեցին մեզ: Նրանք շատ ոգևորված էին, քանի որ իրենց տրվել էր լուրջ հանձնարարական, այն էլ հեռախոսով: Հաջորդ շաբաթ, դասղեկի ժամին իրենց իսկ կողմից ընտրվեցին լավագույն նկարները և պատմեցին այն ամենը, ինչ գիտեին և սովորել էին էքսկուրսիայի ժամանակ մեր տեսարժան վայրերի մասին:

Արդյունքում, ՏՀՏ ոլորտի և մեր պատմամշակութային արժեքների մասին ինֆորմացիան համադրելով ավելի պատկերավոր դարձավ ինֆորմացիայի յուրացումը, քանի որ յուրաքանչյուր աշակերտ հպարտությամբ էր պատմում իր կողմից նկարած նկարի մասին: Պատմելու ընթացքում լրացումներ և ուղղումներ էին կատարում մեկը մյուսին:

Հետազոտական աշխատանքի շրջանակում չորրորդ դասարանի աշակերտների մասնակցությամբ աշակերտներին հանձնարանվեց գրել շարադրություն ‹‹Դռները բացեք, գարուն է գալիս» խորագրով: Աշակերտները շարադրությունը գրեցին Շոպենի »Գարնանային վալս» երաժշտության մեղեդու ներքո: Երբ առաջարկվեց, որ երեխաները շարադրությունը գրեն երաժշտության ներքո, վերջիններս շատ զարմացան, նրանց համար նորություն էր դպրոցական առաջադրանքը զուգակցել երաժշտության հետ: Երաժշտությունը շատ գեղեցիկ էր և հանգստացնող, երեխաները խոստովանեցին, որ ամբողջովին տրվել էին առաջադրանքին: Շարադրությունը գրելուց հետո յուրաքանչյուրը իր գրածը կարդաց կրկին երաժշտության ներքո: Նրանք շատ ոգևորված էին:

Արդյունքում համոզվեցինք, որ 21– րդ դարի այս մարտահրավերների դարաշրջանում պետք է գրագետ մոտեցում ցուցաբերել, որպեսզի ՏՀՏ – ները դրական ազդեցություն ունենան երեխաների արդյունավետ սոցիալականացման գործընթացում և կարողանալ կանխել ու հաղթահարել բացասական ուղիները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Մեր կողմից կատարված տեսական ու գործնական ուսումնասիրությունների և սոցիոլոգիական հարցումների վերլուծության արդյունքում հանգեցինք հետևյալ եզրակացության.

1. Կարևոր է տարրական դպրոցում դասավանդվող յուրաքանչյուր առարկայի դերն ու նշանակությունը երեխայի գեղարվեստական կրթության զարգացման գործում: Ուստի անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ մանկավարժական պայմաններ միջավայրի և երեխայի միջև կապի ստեղծման և ամրապնդման գործում:
2. Շատ կարևոր է միջոցառումների իրականացման ուղիների և միջոցների ընտրման նշանակությունը: Միջավայրում առկա գեղարվեստական տարրերի մեծաքանակությունից ելնելով, ուսուցիչները պետք է միջոցառումները կազմակերպեն միջավայրում՝ բազմակողմանիորեն զարգացնելով կրտսեր դպրոցականի անձը և գեղարվեստական կրթությունը: Ուստի անհրաժեշտ է միջոցառումների և էքսկուրսիաների հաճախակի կազմակերպումը, կիտոթատրոններ, տիկնիկայիններ և պատկերասրահներ այցելությունը, որոնք մեծ նշանակություն ունեն գեղագիտորեն զարգացած սերունդ ունենալու համար:
3. Դասընթացի իրականացման ընթացքում մեծ տեղ պետք է հատկացնել նոր տեխնոլոգիաների, ժամանակակից մեթոդների և միջոցների ընտրությանը, ինչը կնպաստի կրտսեր դպրոցականների մի շարք անձնային որակների, գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը:
4. Ճիշտ և գրագետ մոտեցման դեպքում, տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են հանդիսանալ կրտսեր դպրոցականի գեղարվեստական կրթության զարգացմանը նպաստող հիմնական գործառույթներից մեկը: Արդի պայմաններում ՏՀՏ – ները դրական ազդեցություն կունենան երեխայի արդյունավետ սոցիալականացման գործընթացում և կկաղողանան կանխել ու հաղթահարել բացասական ուղիները:
5. Միջավայրի և գեղարվեստական կրթության զարգացման միջև կապը ուսումնասիրելու համար կատարված սոցիոլոգիական հարցման արդյունքները հիմք ընդունելով կարող ենք արձանագրել, որ գեղարվեստական կրթության զարգացման գործում մեծ է ընտանիքի և դպրոցի դերը: Կարող ենք փաստել, որ կարևոր նշանակություն ունի միջավայրը, ինչը գեղարվեստական կրթության զարգացման հիմնական գործոնն է և ապահովում է անձի բազմակողմանիորեն զարգացումը և ինքնահաստատումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ամիրջանյան Յու. Ա., Սահակյան Ա. Ս., Մանկավարժություն, Ուսումնական ձեռնարկ, Մանկավարժ հրատ., Երևան, 2005թ., 368-456էջ:
2. Աշիկյան Ա., Ընտանիքը երեխայի անձի ձևավորման և զարգացման սոցիալ-մշակութային միջավայր, ‹‹Պատմություն և միջավայր» ,Հայագիտական հանդես, Երևան, 2016, էջ 348:
3. Դալաքյան Ա.Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ձևերը ժամանակակից դպրոցում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, 2015, էջ 111-117:
4. Դանիելյան Լ., Կրտսեր դպրոցականի գեղագիտական դաստիարակության առանձնահատկությունները տարրական դպրոցում, ‹‹Մխիթար Գոշ», գիտամեթոդական հոդվածներ, 1.2020, էջ 216:
5. «Ընտանիք» ինստիտուտի հետազոտություն, Երևան, 2006:
6. Թոփուզյան Աիդա, Միջավայրի հասունացումը որպես երեխայի լիարժեք զարգացման կարևոր բաղադրիչ, Մանկավարժություն ամսագիր, էջ 211-212:
7. Թովմասյան Լ., Ծնող-ուսուցիչ փոխհարաբերությունը և դրա ներգործությունը ուսումնական գործընթացի վրա, ‹‹Նախաշավիղ›› 5.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 57-59:

8. Խուրշուդյան Ժասմենա, Բնությունը՝ որպես գեղագիտական դաստիարակության միջոց:
9. Խոջոյան Լ., Ընտանիք-դպրոց-համագործակցություն, «Նախաշավիղ» գիտամեթոդական հանդես, 1.2017, էջ 56-61:
10. Հարությունյան Ն.,«Խաթարված ընտանիքները և նրանց հետևանքները», «Երևանի համալսարան » ամսագիր,1992, թիվ 3:
11. Հովսեփյան Վ. Ա., Գեղագիտական ուսմունքների պատմություն, Երևան, 1979, էջ 20:
12. ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք,15.11.2012թ. N46:
13. Ղուկասյան Լ. Հ., Դպրոց-ընտանիք համագործակցության ուղիները հանրակրթության պայմաններում, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան,2015, էջ 198:
14. Մարկոսյան Ն. Ռ., Ժամանակակից ընտանիքների արժեհամակարգը և դրա ազդեցությունը երեխաների դաստիարակության վրա, Մանկավարժության արդի խնդիրները մարտահրավերներ և լուծումներ, Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան 2015, էջ 206:
15. Միջավայրի ազդեցությունը դաստիարակության գործում- http://www.surbzoravor.am/post/view/och-liar%D5%AAeq-yntaniqi-azdecutyuny-erekhayi-andzi-dzevavorman-vra
16. ՄովսիսյանՍ. Ա., Դպրոցի կառավարման հիմունքները, Երևան, 1980, էջ 170:
17. Ներսիսյան Լ. Ս., Կրթություն և գեղագիտություն, Եր., 2002, էջ 48:
18. Ջանիկյան Ս.,Դպրոցի և ընտանիքի սոցիալական համագործակցության ժամանակակից խնդիրները կրտսեր դպրոցականների դաստիարակության գործընթացում, ‹‹Նախաշավիղ›› 7.2010, Գիտամեթոդական հանդես, էջ 62:
19. Տիգրանյան Լ., Ուսուցիչների և ծնողների համագործակցությունը, ‹‹Նախաշավիղ›› 4.2012, Գիտամեթոդական հանդես,էջ 61:
20. Քոչարյան Լ., Ընտանիք և դպրոց, Գեղագիտական դաստիարակության խնդիրները, Երևան 2010, էջ 15:
21. Азаров А. Ю. Проблематика и эстетика современного художественного образования / А. Ю. Азаров. – М.: Издательство ‹‹ Московский друг ››, 2008. – 220с.
22. Акишина Е. М. Педагогика искусства и современное художественное образование / Е. М. Акишина и др., под ред. Е. В. Боякова. – М.: ТЦ Сфера, 2017. – 306 с.
23. Бечак Б.А. Воспитание искусством. М.: Просвещение, 1981 280 с.

24. Волчегорская Е. Ю. Художественно-эстетическое воспитание в начальной школе: лекция / Е.Ю. Волчегорская. – Челябинск: Изд-во Челяб. гос. пед ун-та, 2010, ст 29:
25. Неменский Б.М., Мудрость красоты, М., “Просвещение”, 1981, с. 28:
26. Неменский Б.М. Педагогика искусства. Видеть, ведать и творить: учебное пособие / Б.М. Неменский. - М.: Просвещение, 2012. – 450с.
27. Олесина Н.П. Художественное образование как основа развития культуры личности /Е.П. Олесина // Педагогика искусства. – 2014 - №3 – С. 23-27.
28. Рафикова О. С. Педагогическая поддержка развития самостоятельности младших школьников в процессе эстетического воспитания // Актуальные проблемы гуманитарных и естественных наук. 2011. № 5. С. 167-168: